Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունվարի 13-ի N 42 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՆՍԱՐՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՆՁԱՆՑ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են տեխնիկական խափանումների, կապի միջոցների (հեռահաղորդակցական ցանցերի և «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի) աշխատանքի ընդհատումների, էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանվող այլ դեպքերում տեղեկատվական համակարգերի անսարքության (այսուհետ՝ համակարգի խափանում) մասին, որով պայմանավորված հետագծելիության ենթակա ապրանքների տեղափոխման հետ կապված գործառույթների մասին տեղեկատվությունը չի ներառվել հետագծելիության համակարգ, անձանց տեղեկացնելու (տեղեկատվությունը հրապարակելու) հետ կապված հարաբերությունները:

2. Համակարգի խափանման յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ հարկային մարմինը տեղեկատվությունը հրապարակում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում (www.petekamutner.am): Համակարգի խափանումների վերաբերյալ տեղեկատվությունն հրապարակվում է այն հայտնի դառնալու օրը:

3. Համակարգի խափանման յուրաքանչյուր դեպքի ավարտից հետո՝ մինչև 1 աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է համակարգի խափանման ժամանակահատվածի սկիզբը (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամը, րոպեն) և ավարտը (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամը, րոպեն):

4. Սույն կարգի 3-րդ կետի համաձայն հրապարակված տեղեկատվությունը խմբավորվում է ըստ ամսաթվերի, ամիսների, տարեթվերի և պահպանվում հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում՝ առնվազն 5 տարի ժամկետով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.01.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ